ճարտուկ ճանճկէնը, որի համար պատերազմ ծագեց Պարսից և Հայոց մէջ[1], և որը, եթէ Բաջանց վէպում «Թուր Կէծակի» հետ միասին յիշուած «Բոզ ձին Արակին» չէ, անշուշտ մեր Զոջանց տան մի փոփոխակում «Բուռիկ Զալալու» հետ անմիջապէս յիշուած «Բօզբէ-Դաւին[2]» է (№ 6, էջ 523[2])։ Այս երեք անուններից վերջինը նշանակում է սպիտակ, պիսակաւոր կամ խայտեր ունեցող ձի, որ յատուկ է Բաջերին[3] և Բաջքերին[4], ուրեմն և Բաջանց տան դիւցազներ Ջիւան շահ—Տիրան Բ.-ին և Շիրին շահ—Արշակ Բ.-ին։

Բայց ինչ է նշանակում Ճալալի կամ Զալալի Բուռիկի ձին։ Այդ անունով մի քուրդ ցեղ այժմ էլ բնակւում է Հայաստանում, որքան մեզ է յայտնի, Մասիսի շուրջը. և որովհետև քուրդերը յայտնի են իրանց ձիասիրութեամբ, լաւ նժոյգներով, որոնց ցեղաբանութիւնը պահւում է թղթով սերունդէ սերունդ, ուստի Բուռիկ Ճալալի կարող է նշանակել այդ ցեղի ձի, ինչպէս ասում են արաբական, անգլիական ձի և այլն։ Պէտք է կարծել, որ Բուռիկիկ Զալալին յիշուել է և Բէօռ-Օղլու դիւցազներդութեան մէջ, ուստի

---

1. Փ. Բուզանդ, Գ. Ի—ԻԱ. էջ 49—58. Վենետիկ 1889.

2. Այս ձին «Բոզ-Բէդաւին» յիշւում է Ասլան աղայի ժողովրդական երգում (Դարեգին սարկ. Յովսէփեանց «Փշրանքներ» ժողովրդական բանահիւսութիւնից էջ 5—9. Թիֆլիս 1895). եւ «Մոկաց Միրզէն» երգում «Բոզ-Դիդաֆին» անունով (Անդ, էջ 19)։ Երկու ձին էլ մի աւելի հաստատուն ապացոյց են Արշակ Բ.-ի Բէօռ-Օղլին լինելուն։ Ինչպէս Բէօռ-Օղլին բացի Դրաթից ունի եւ մի Բ.-ը Արաբաթ կամ Դորաթ. այնպէս էլ Արշակ Բ.-ի հայր Տիրան Բ.-ը պիտի ունեցած լինի. որ սակայն Խորենացին վերագրում է Տիրան Ա.-ին (Խորեն. Բ. ԿԲ)։ Դատաբ. Դատաբէ, Դատաբէն նախարարի անունը. որ յիշւում եւ Բուզանդում Խոսրով Բ.-ի ժամանակ եւ երկուսի մէջ էլ Բգնունի է կոչւում, Դիդաֆին է, ինչպէս որ Տատեանը—Տատեանը (Խորեն. Բ, ԿԲ. 140) փոխուել է Տէատէն (Ալիշան, Այրարատ, Ի, § 209. էջ 517)։ Դրաթը հաւանօրէն Տրդատ—Արտաշէսի «սեաւ գեղեցիկ» ձին է, ինչպէս որ Թուր Կէծակին կամ Հաւլունի սուրը. որ յիշւում է եւ Դաշանց Թղթում, նորանն է. ապա անցած Տրդատ Մեծին եւ իր յաջորդներին. բայց այս մասին այլ տեղում։

3. Ատենահաս Ս. Սարգիսը սպիտակ կամ բոզ ձի ունի։ Վասակ սպարապետի որդի Մուշեղ Մամիկոնեանն էլ «ձերմակածի» է (Բուզանդ. Ե. Բ. 194. Վենետիկ 1889. Հմմտ. Մեսրոպ երէց. Պատմ. մնացորդաց Հայոց եւ Վրաց. Ե. էջ 87—88 Մադրաս 1775. Սոփերը Զ. ԺԱ. էջ 70. Վենետիկ 1855)։

4. Սեբէոս. Պատմ. Գ. Դ. էջ 58. Ս. Պետերբ. 1879.